

նակը» աշխատության մեջ մեծ հեղափոխական-դեմոկրատի պետությանը վերաբերող հարցերին՝ զեկուցողը փաստերի հիման վրա բնութագրեց Նալբանդյանի առաջադեմ հայացքները ժամանակի պրոբլեմային հարցերից մեկի վերաբերյալ: Նա նշեց, որ Նալբանդյանը բջնամի էր բռնապետությանը՝ ո՛ր երկրում և ինչպիսի՛ կերպարանում էլ այն հանդես գար: Նա կոչ էր անում ոչնչացնել բռնակալական պետական կարգը, եթե նույնիսկ նրան անվանում են «լուսավորյալ միապետություն»: Այս հարցում Նալբանդյանը հանդես եկավ նաև հայ կղերաֆեոդալական և լիբերալ-բուրժուական մտածողների դեմ, որոնք պրոպագանդում էին իր ժամանակին լայն տարածում ստացած այդ գաղափարը: Մ. Նալբանդյանը «կատարյալ» պետություն համարում է այն պետությունը, շարունակում է զեկուցողը, որը կգտնվի ժողովրդի ձեռքում հողի հետ միասին: Այդ պատճառով էլ նա հողազուրկ աշխատավորներին կոչ էր անում գյուղացիական հեղափոխության միջոցով ոչնչացնել գոյություն ունեցող պետությունները՝ իրենց բոլոր ձևերով հանդերձ և հաստատել գյուղացիական դեմոկրատական հանրապետություն, որը կծառայի ժողովրդի շահերին, կարտահայտի նրա

կամքը: Պետության մասին Նալբանդյանի հայացքները նոր էջ բացեցին հայ ֆադաֆական և իրավական մտքի պատմության մեջ: Դրանք նետագայում զարգացրին Ստ. Շահումյանը, Բ. Կնունդյանը, Ալ. Մյասնիկյանը և մյուս հայ լեհիկյանները:

Նոյեմբերի 14-ին տեղի ունեցած հանդիսավոր նիստում հայ մեծ հեղափոխական դեմոկրատի մասին զեկուցումով հանդես եկավ ՀՄԱՀ ԳԱ քղթակից անդամ պրոֆ. Մ. Մկրտչյանը (զեկուցումը տպագրված է մեր հանդեսի այս համարում):

Միտյայե Նալբանդյանի ծննդյան 150-ամյակին նվիրված հանդիսություններ տեղի ունեցան նաև Մոսկվայում, Լենինգրադում, Դոնի Ռոստովում և մեր Միության այլ ֆադաֆներում: Մարդկության բարօրության և լուսավոր ապագայի համար մղված պայքարում զոհված հեղափոխական-դեմոկրատի մեծարումը վերածվեց ժողովուրդների բարեկամության վառ ցույցի:

Ս. ՄՈՒՐԱԴՅԱՆ
Լ. ԱՎԵՏԻՍՅԱՆ
Ա. ԱՄԻՐԲԵԿՅԱՆ
Գ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՀԱՅ ԵՎ ՌՈՒՍ ՀԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՆ ԵՎԻՐՎԱԾ ՀԱՄԱՏԵՂ ԳԻՏԱԿԱՆ ՆՍԱՇՈՐՁԱՆ

Երևանի պետական համալսարանը ՍՄՀՄ ԳԱ ռուս գրականության ինստիտուտի (Պուշկինյան տուն) ռուս հին գրականության բաժանմունքի հետ համատեղ կազմակերպեց ռուս հին գրականության ընթերցումներ՝ նվիրված Արևելյան Հայաստանը Ռուսաստանի հետ միանալու 150-ամյակին: Երևանի համալսարանում ընթերցումները տեղի ունեցան օպրիլի 10-ից 12-ը:

«Ռուս միջնադարյան գրականության գեղարվեստական առանձնահատկությունները» զեկուցումով հանդես եկավ հանրահայտ գիտնական, միջնադարի պատմաբան, ռուս հին գրականության վերաբերյալ բազմաթիվ աշխատությունների հեղինակ, ակադեմիկոս Գ. Ս. Լիխաչովը: Նա ընդգծեց, որ ժողովուրդներին մոտեցնում է այն անհատականը, ինքնատիպը, որը բնորոշ է ավանդույթներով հարուստ յուրաքանչյուր մշակույթի: Հին ռուս գրականության ինքնատիպությունը բնութագրելիս Լիխաչովը ֆենեց հին ռուս գրականության միասնականության հարցը: Այդ միասնականության ապացույցն է այն, որ հին ռուս գրականության առանձնահատկությունները պահպանվել են նրա զարգացման ողջ ընթացքում. նրա բոլոր հուշարձանների միջև գոյություն ունի անխզե-

լի կապ, յուրաքանչյուր ստեղծագործող ձրգտում է յուրացնել նախորդի զարգացման փորձը: Մրանով է պայմանավորված հին ռուս գրականության ուրիշ առանձնահատկություններն Գ. Լիխաչովը կանգ առավ ռուս հին գրականության ուրիշ աղանձնահատկությունների վրա (անաեունություն, հանդիսակարգություն և այլն):

Բանասիրական գիտ. դոկտոր Օ. Տվորոգովի զեկուցումը նվիրված էր Հին Ռուսիայի թարգմանչական գրականության պրոբլեմներին ուսումնասիրությանը: Թարգմանչական գրականությունը մեծ դեր է խաղացել սեփական գրականության ձևավորման գործում, իսկ պատմական տարեգրությունների թարգմանությունները սերտորեն կապված են ռուսական տարեգրության հետ: Չեկուցողը հանգամանորեն կանգ առավ թարգմանչական գրականության ուսումնասիրության արդիական պրոբլեմների վրա (հանրային բաղադրիչների որոշում, թվագրության հարցեր, հուշարձանի լեզվական առանձնահատկություններ, կապը կոնկրետ պատմա-մշակութային իրավիճակի հետ և այլն):

Բանասիրական գիտ. րեկնածու Գ. Պրոխորովի զեկուցման մեջ շոշափվեցին եվրոպայի պատմության ամենահետաքրքիր շրջաններից մեկի՝ վաղ վերածննդի ուսումնասիրության պրոբ-

լեմները, բացահայտվեց բյուզանդա-սլավոնական երկրներում նրա ի հայտ գալու յուրահասկոյությունը: Չնայած հագնոր շարժին, այն ժամանակվա քանդ բանավեճերում հնչում էին հումանիզմի գաղափարները:

Բանասիրական գիտ. դոկտոր *Յա. Լուրյեի* «Ռուս տարեգրության առանձնահատկությունները և նրա ուսումնասիրությունը» գեկուցումը ուշադրության արժանացավ պրոբլեմների իր լայն ընդգրկմամբ: Քննարկելով ռուս տարեգրության ուսումնասիրության հարցերը՝ գեկուցողը կանգ առավ տարբեր տարեգրությունների փոխադարձ կապի վրա: Նրանց միջև եղած տարբերությունների և ընդհանրությունների վերլուծության հիման վրա առաջարկվեցին այս կամ այն տարեգրության ծագման և պատմության հարցերը: Ցույց տրվեց ժամկետի և գրության տեղի (կամ արձանագրության), ինչպես նաև գաղափարական ուղղվածության և հուշարձանի լեզվի միջև եղած սերտ կապը: Զեկուցողը կանգնեց պատմական էյուրեթի հիման վրա առաջադրեց պատմագրական մեթոդաբանության ընդհանուր հարցերը:

Ռուս հին գրականության ընդհանուր հուշարձանի՝ «Աստ Իգորի գեղի մասին» երկի ուսումնասիրության հարցերը բնավեցին բանասիրական գիտ. թեկնածու *Ն. Դեմկովայայի* գեկուցման մեջ: Նա միասնական կապի մեջ ներկայացրեց «Աստի» ուսումնասիրման տարբեր տեսակետները՝ վավերականության, հեղինակի անձնավորության, լեզվի և ոճի բավանդակության, բանասիրության և գրավոր հուշարձանների կապի պրոբլեմները: Զեկուցողը էջեց հուշարձանի լեզվի դիալեկտիկական հիմքի բացահայտման անհրաժեշտությունը:

Ռուս հին գրականությունը սերտորեն կապված է եղել գեղանկարչության հետ, և զարգացման բառ տրինաչափություններ բնորոշ են ինչպես բանահյուսական, այնպես էլ կերպարվեստագիտական տեսակետից: Հենց այդ դրույթն էր ընկած բանասիրական գիտ. թեկնածու *Օ. Բելյորովայի* գեկուցման հիմքում: Նա բացահայտեց ռուս սրբապատկերային արվեստի յուրահատկությունը, բարձր գեղարվեստականությունը և հումանիզմը: Օ. Բելյորովան ընդգծեց հին ռուսական գեղանկարչության բնորոշ գծերը (սրբապատկերի կոմպոզիցիան, ֆոնը և դիմանկարային մասի ներդաշնակությունը, պատկերի և բանահյուսական տեքստի կապը, ռուս հին արվեստի պայմանականության բնույթը և այլն), բացահայտելով սրբապատկերի դերը ռուս հին գրականության համակարգում:

Բանասիրական գիտ. դոկտոր *Ա. Պանչենկոյի* գեկուցման մեջ խոսվեց XVII դարում տեղի ունեցած մշակույթի վերակառուցման և գաղափարական արժեքների վերագնահատման ընթացքի մասին, որի շնորհիվ հնարավոր

եղավ անցումը նոր գրականության: Այդ պրոցեսը մի կողմից կապված է ռուսական բարեկիրյի, իսկ մյուս կողմից՝ Ռուսիայի պատմական անցյալի առանձնահատկությունների հետ:

Բանասիրական գիտ. թեկնածու *Ի. Սմիռնովը* փորձ արեց զարգացնել Գ. Լիխաչովի առաջարձած առաջնային և երկրորդական ոճերի հակադրությունը: Այսպես կոչված առաջնային ոճին է պատկանում ինչպես ռուս հին գրականությունը, այնպես և ռեալիզմը, իսկ այն ժամանակ երկրորդին էին վերաբերում բարեկիրյան ոճմանտիզմը: Վերլուծելով ռեալիզմի գեղարվեստական համակարգը՝ Ի. Սմիռնովը ցույց տվեց հին և նոր գրականությունների տիպաբանական ընդհանրությունները:

Վերջում ակադեմիկոս *Դ. Լիխաչովի*, պատմական գիտ. դոկտոր *Կ. Յուզբաշյանի*, *Վիլխուս*-փայական գիտ. դոկտոր *Ս. Արևշատյանի* էյուրթները ամփոփեցին ընթերցումների արդյունքները: Խոսելով Պուշկինյան տան ռուս գրականության բաժանմունքի անունից, կադ. Լիխաչովն իր հիացմունքն արտահայտեց հայ մշակույթի մասին և նշելով նրա ուսումնասիրման կարևորությունը, բարձր գնահատեց հայ գիտնականների աշխատությունների դերը: Ապա Կ. Յուզբաշյանը և Ս. Արևշատյանը իրենց էյուրթներում շնորհակալություն հայտնեցին կոնֆերանսի մասնակից հյուրերին բովանդակալից գեկուցումների համար, ընդգծելով, որ նրանցում վերահանված պրոբլեմները մեծ կարևորություն ունեն հայ հին գրականության ուսումնասիրման գործում:

Բացի համալսարանում կայացած հանդիպումներից, լեհիզգրադի գիտնականները հյուրընկալվեցին Մ. Աբեդյանի անվան գրականության ինստիտուտի և Մատենադարանի իրենց կոնֆերանսի կողմից: Ակադ. Լիխաչովն Մատենադարանին նվիրեց իր անձնական հավաքածուից XVI դարի հայ ձեռագիր Ավետարան:

Ընթերցումներն անցան մեծ հաջողությամբ և դարձան մեր հանրապետության մշակութային և գրական կյանքի կարևոր իրադարձություններից մեկը:

* * *

Հունիսի 5-ից 7-ը ՍՍՀՄ ԳԱ Լենինգրադի ռուս գրականության ինստիտուտում (Պուշկինյան տուն) տեղի ունեցավ «Հայ հին գրականության երեք օրը Պուշկինյան տանը» գիտաժողովը: Այն կազմակերպել էին ՀՍՄՀ ԳԱ Մանուկ Աբեդյանի անվան գրականության ինստիտուտը, Երևանի պետական համալսարանը և Մետաղ Մաշտոցի անվան Մատենադարանը Պուշկինյան տան հետ միասին: Գիտաժողովի անմիջական նախաձեռնողը Լեհիզգրադի ռուս գրականության ինստիտուտն էր, որի աշխատակիցները սույն րվականի ապրիլին Երևանի պետական համալսարանում հան-

դես էին եկել ռուս հին գրականության տարբեր հարցերին վերաբերող զեկուցումներով:

Լեինգրադյան երեք օրերի ընթացքում կարդացվեցին ինը զեկուցումներ: Ռուս գիտնականները լսեցին Ղ. Այվազյանի «Հին շրջանի հայ-ռուսական մշակութային և գրական կապեր», Քնարիկ Տեր-Ռավյանի «Վահան Գողթնեցու վկայաբանությունը և նրա ժանրային առանձնահատկություններ», Հասմիկ Սիմոնյանի «Ալեքսանդր Մակեդոնացու պատմությունը հայ գրականության մեջ», Իմանուել Պիվազյանի «Հայ միջնադարյան առակագրությունը», Մարգո Մելիքյան-Դարբինյանի «Հովհաննես Դրասխանակերտու պատմությունը որպես գրական հուշարձան», Արշալույս Ղազինյանի «Գրիգոր Նարեկացու «Մատյան Ողբերգության» ստեղծագործության բնարական հերոսը» և Լևոն Չուգասյանի «Հայ միջնադարյան մանրանկարչությունը» զեկուցումները: Երևանի համալսարանի, Մատենադարանի և գրականության ինստիտուտի վերահիշյալ աշխատակիցներից բացի հայկական պատվիրակության կազմում էին նաև ՀՍՄՀ ԳԱ արևելագիտության ինստիտուտի աշխատակից, բանասիրական գիտ. թեկնածու Պարույր Մուրադյանը և «Սովետական գրող» հրատարակչության բաժնի վարիչ Իրինա Կարոնյանը: Պ. Շուրադյանի զեկուցման թեման էր «Գրքի դասակարգման սկզբունքները միջնադարյան Հայաստանում», իսկ Ի. Կարոնյանը հանդես եկավ «Հայ հին գրականության հուշարձանները» մատենաշարի մասին հաղորդմամբ: Լեինգրադյան գիտաժողովը սկսվեց հայկական պատվիրակության ղեկավար, գրականության ինստիտուտի տնօրեն, ՀՍՄՀ ԳԱ քրդակից անդամ էդվարդ Ջրբաշյանի բացման խոսքով: Նա սեղմ ներկայացրեց հայ գրականության ժամանակագրական փուլերը, զարգացման հիմնական ուղղությունները և գիտական ուսում-

նասիրությունների գլխավոր արդյունքներն ու խնդիրները: Է. Ջրբաշյանը նշեց, որ ընթերցումների նպատակն է ներկայացնել ոչ թե հայ հին գրականության ընդհանուր պատկերը կամ նշանավոր նեղիմասկների դիմանկարները, այլ վերջին տարիներին կատարվող առանձին հետազոտությունների արդյունքները:

Կարգացված զեկուցումները առաջ բերեցին մեծ հետաքրքրություն լեինգրադյան գիտնականների շրջանակում և դրանց շուրջ ծավալվեց մտերի փոխանակություն: Գիտաժողովի վերջում արդյունքները ամփոփելիս Պուշկինյան տան հին ռուսական գրականության բաժնի վարիչ, ակադ. Դմիտրի Լիխաչովը բարձր գնահատեց հայկական ընթերցումները և նշեց զեկուցումների կարևորությունը հին գրականության զարգացման ընդհանուր օրինակաբանությունների բացահայտման տեսակետից: Դ. Ս. Լիխաչովը և մյուս ելույթ օժեցողները ընդգծեցին նմանօրինակ գիտաժողովների նշանակությունը ազգային գրականությունների ընդհանրությունների և յուրահատկությունների ուսումնասիրման գործում:

Գիտաժողովի օրերին հայ պատվիրակության անդամները այցելեցին Պուշկինյան տուն, դիտեցին գրադարանն ու ձեռագրապահոցը:

Բոլոր շրջագայությունների և այցելությունների ժամանակ հայ գիտնականները վայելում էին ռուս գործընկերների բացառիկ հագաստարությունն ու ուշադրությունը: Գիտաժողովը ոչ միայն գիտական շփում էր, այլև հոգեկան մերձեցում ու փոխհարստացում:

Անշափ ուրախալի է, որ առաջիկայում Պուշկինյան տունը պիտի հրատարակի երևանյան և լեինգրադյան ընթերցումների նյութերն ընդգրկող ժողովածուն:

Ս. ԶՈՒՅԱՆ
Լ. ԶՈՒԳԱՍՉԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅՈՒՆ

Շուրջ մեկուկես տասնամյակ է, ինչ Երևանի պետական համալսարանի և Լյուբլինի (Լժ) Մարիա Կյուրի-Սկլոդսկայայի անվան համալսարանի միջև ստեղծված են գիտական համագործակցության ու բարեկամական սերտ կապեր: Այդ կապերը ավելի ամրապնդելու նպատակով երկու համալսարանների միջև 1971 թ. մայիսին կնքվել է պայմանագիր: Անցած ժամանակաընթացքում, ըստ այդ պայմանագրի, Երևանի և Լյուբլինի համալսարաններում կազմակերպվել են գիտական նստաշրջաններ, փոխայցելություններ, հանդիպումներ ու այլ միջոցառումներ:

Երևանի համալսարանը 1975 թ. «Նղբայրա-

կան համագործակցություն» վերնագրով առանձին գրով ուսուրեն հրատարակել է այդ կոնֆերանսների նյութերը: Իսկ Լյուբլինի համալսարանը լեհերեն տպագրել է պրոֆ. Մ. Զակչևսկա-Նյուրասովայի «Հայաստանի պատմություն» գիրքը, որն այժմ թարգմանվում է հայերեն և առաջիկայում լույս կրնձայի Երևանի համալսարանի հրատարակչությունը: Հայ-լեհական պատմական կապերի ու հարաբերությունների մասին 1977 թ. մենագրություն է տպագրել նաև Երևանի համալսարանի ընդհանուր պատմության մրիոնի դոցենտ Մ. Հովհաննիսյանը: Շուտով Լյուբլինի համալսարանը լեհերեն լույս կընձայի հայ-լե-